# ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
(XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ)

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ

*XIX դարի կեսերին արևմտահայ հասարակական-քաղաքական, հատկապես հոգևոր շրջանները սկսեցին հարց բարձրացնել այն մասին, որ պետք է զբաղվել ազգային վանական-եկեղեցական տնտեսության խնդիրներով, պարզաբանել հայոց սրբությունների ներկա վիճակը և նշել ապագան: 1852 թ. մարտի 22-ին «Մասիսը» գրում էր, որ ազգային վանքերը «քիչ թե շատ ընդարձակ հողեր ունին, որոնք առայժմս հիմիկ ու հիմա կամ բոլորովին անմշակ ամայի թողված են կամ միայն քանի մը վանականաց սակավիկ պիտոյից չավ կմշակվին»: Շուրջ 13 տարի անց՝ 1865 թ. փետրվարի 20-ին նույն թերթը գրում էր. «Գրեթե ամեն վանք անշարժ կալվածներ ու եկամուտներ ունի, որ հիմա մեծ մասամբ ի զուր կկորսվի և չենք դիտեր որոնց կոկորդը կլցվին: Ամեն բանե առաջ, և որպեսզի վանորեից մեջ պետք եղած բարեկարգությունները գործադրելու դժվարությունները վերանան, պետք է, որ անոնց ելմտից հաշիվները կարգի դրվելով ազգային մեծ գումարի մը մեջ արձանագրվին: Առանց ամեն մեկ վանքի նյութական միջոցներ գիտենալու, անհնար է պետք եղած բարեկարգություններ տնօրինել և առանց այն միջոցներն զգուշավոր խնայողությամբ գործադրելու, չենք կարծեր, որ վանորեից նկատմամբ հաստատուն բան մը ընելու կարելի ըլլա»:*

*Պարբերականի այդ ահազանդերը թեև ուշ, բայց գտան իրենց արձագանքները: 1872 թ. Կ. Պոլսի վանքերի խորհուրդը նշում էր, որ Օսմանյան կայսրությունում կան շուրջ 80 վանքեր, որոնք ունեն հարյուրավոր արտեր, արոտներ, այգիներ, պարտեզներ, ձիթարաններ, ջրաղացներ, զանազան տներ ու խանութներ: Ցավոք, անհայտ է մնում, թե գբանցից քանիսն ունեն համապատասխան փաստաթղթեր, քանիսն են գտնվում կողմնակի անձանց ձեռքերում, քանիսն են մշակվում կամ մնում անմշակ, քանիսն ունեն անասուններ, քանիսը՝ ոչ: Շատ վանքեր «իրենց արոտներու չնորհիվ կրնային կարևոր հասույթ ձեռք բերել, եթե անասուններ պահեին»[1]:*

*Բայց վանքերի խորհուրդը ոչ միայն չլուծեց այդ խնդիրները, այլև ցրվեց, թողնելով միայն իր նիստերի արձանագրությունները, իսկ գավառական վիճակների հոգևոր առաջնորդները, վանահայրերն ու միաբանները, համարելով իրենց իրերի տերեր, վարվում էին վանքապատկան ու եկեղեցապատկան ունեցվածքների հետ ինքնագլուխ, որևէ հաշիվ չտալով վերևներին[2]: Նահանգներում ու գլխավոր քաղաքներում հայոց*

---

1 *«Մասիս», 1892, մայիսի 16, էջ 109:*

2 *Տե՛ս նույն տեղում, օգոստոսի 29:*

հոգևոր ղեկավարները վարդապետներն էին, իսկ գավառներում կամ կայմակամություններում եպիսկոպոսները: Սրանց մեծ մասը գործարքի մեջ էր մտնում թուրքական պաշտոնյաների ու քրդական ցեղապետերի հետ և վանքերի ու եկեղեցիների հարստությունները տնօրինում իրենց հայեցողությամբ: Իսկ պատրիարքարանը, «Մասիսի» վկայությամբ, «խիստ անհոդ է գավառաց վրա և խնամք անդամ չունի, կթվի թե գավառականք ազգային նշանակություն չունին պատրիարքարանի համար: Պատրիարքարանը ... ասոր անոր միջնորդությամբ վարդապետ մը առաջնորդ ընելով ժողովուրդը կհանձնե անոնց»: Ժողովուրդն էլ ստիպված է լինում «կամ կրոնափոխության դիմել և կամ այլևայլ միջոցներ գործածել այն բռնավորներեն ազատվելու համար»[3]:

Թուրքական կառավարությունը թանզիմաթի տարիներին թեև հայտարարեց ազգերի իրավահավասարություն, բայց նրա այդ հայտարարությունը մնաց թղթի վրա: Հայկական ինչպես այլ, այնպես էլ հոգևոր հաստատությունները չէին օգտվում այն իրավունքներից ու արտոնություններից, որոնցից օգտվում էին մահմեդականներինը: Կառավարությունը, օրինակ, օրենքով պաշտպանում էր մեջեդների ու մզկիթների ունեցվածքը, իսկ հայոց վանքերինն ու եկեղեցիներինը հայտարարում էր մահլուլ, այսինքն՝ անտեր: Ռաֆֆին 1870-ական թվականներին քննադատում էր այդ վարքագիծը: «Տաճկաց կառավարությունը,– գրում էր նա,– վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող է լինել միայն անձնավորություն ունեցող անհատներ, իսկ վանքը և եկեղեցին նրա կարծիքով իրավաբանական անձնավորություն չէ, ուրեմն և կալվածատեր լինել կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մահլուլ, այսինքն՝ որոշ տեր չունեցող: Այսպիսի կալվածքների տերն ինքը, պետությունն է լինում ... չենք կարողանում հասկանալ, թե ինչու մահմեդականների մզկիթը և մադրասան կարող են կալվածք (վագըֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և դպրոցը չեն կարող ունենալ»[4]:

Օգտվելով կառավարության այդ քաղաքականությունից, մահմեդականները, հատկապես աղաներն ու բեյերը, զանազան եղանակներով հափշտակում էին հայոց վանքապատկան ու եկեղեցապատկան կալվածքները կամ հարկերի ու տուրքերի տակ էին դնում դրանք: Ահա փաստեր: 1872-1873 թթ. Երեմիա Տևկանցը, ճանապարհորդելով Բարձր Հայքով ու Վասպուրականով, գրում էր, որ քրդերը զավթել են Անիի մոտ գտնվող Ուչքիլիսա վանքը, բնակվում են վանքում, իսկ եկեղեցին դարձրել են մարագ[5]: Բասենում 30 քրդական ընտանիք բռնագրավել են Հոփերունք վանքը, դարձրել են այն իրենց բնակարան, իսկ եկեղեցին՝ փարախ: Նույն շրջանում զիլանցի քրդերը սեփականացրել են Վարդեհեր վանքը և նրա հողերում տներ կառուցել[6]: Ե. Տևկանցը շարունակում էր. «Արճեշո Արծ-

3 «Մասիս», 1869, մայիսի 24:

4 Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. 9, Երևան, 1964, էջ 233:

5 Ե ր ե մ ի ա Տ և կ ա ն ց. Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873): Ձեռագիրը պատրաստել և ծանոթագրել է Հ. Ե. Պողոսյանը. Երևան, 1991, էջ 81:

6 Նույն տեղում, էջ 119:

վագիր վանքի քով քրտեր տուն չինելով հողերու մեծ մասին տիրեր են, վանահայր տեր Սողոմոնն քանիցս բողոքեր է, լսելի չի եղեր...»[7]: 30 տարի առաջ Ոստանա քրդեր Ս. Աստվածածնի վանքի հողերից «124 չափի* տեղ հափշտակեր են, վանահայր տեր Սարգիս առաջին տարիներ բողոքեր է առ կառավարություն, այս տարի ևս բողոքեց և շատ աշխատեցավ, սակայն կառավարությունն ոնց չուզեց վանքի սեփականության իրավունք ճանաչել և վերադարձնել...»[8]: Մոկաց աշխարհի Աուրբ Կարապետ վանքի հողերը նույնպես «քրտերը թափու ըրած են յուրյանց վրա»[9]: Տևկանցը նաև հիշատակում էր, որ Սուրբ Խաչ վանքում հաստատվել է քուրդ Տեվրիշը և Աբրահամ անունով մի աշխարհականի «յուր կողմանե նստեցուցեր է վանքի մեջ, իրրև պահապան: Հողեր և կալվածներ Տեվրիշ պեյի ձեռքն է: Վանքն ունի մի ճոխ կղթորի ծառաստան, որ տարին առնվազն կրնա 5-6 հազար դուրուշ եկամուտ բերել, սակայն ավաղ, որ դաբձյալ քրտեր տիրապետեր են ծառաստանին եկամուտն իրենց սեփականելով»[10]: Գ. Սրվանձտյանցը հիշատակում էր, որ քրդերը Տիգրտնակերտի վիլայեթում նույնպես ղավթել են հայոց մի շարք վանքերի հողերը[11]: Կասկածից վեր է, որ նրանք բռնագրավել էին հայ վանքերի հողերը Արևմտյան Հայաստանի նաև այլ շրջաններում:

Քրդերը մի շարք տեղերում վանքերից գանձում էին զանազան հարկեր ու տուրքեր: 1874 թ. ապրիլի 25-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին հաղորդում էին, որ Մշո գավառի Մահպուպնակ գյուղի քրդերը «կերթան Աղրյուրիկ վանքը, կուտեն կխմեն և ամեն տարի իրրև տուրք՝ պանքեն 400 դուրուշ, 4 կով, 20 ոչխար, 4 բաթման ծխախոտ, 4 բաթման յուղ, 5 գրիվ ցորեն կառնուն բռնի: Եթե վանքը զանոնք չհատուցանե, միաբանությունը և հայերը մեծ վտանգի կենթարկվին»[12]: Մի այլ աղբյուրում հիշատակվում էր, որ քրդերը Մշո Ս. Առաքելոց վանքից ամեն տարի իրրև խաֆիրության տուրք առնում են ցորեն, ոչխար, յուղ, ձեթ և այլն[13]:

Քրդերը հափշտակում էին անդամ վանքերին ուխտավորների նվիրած գումարների մի մասը: Ցեղապետերը կամ աղաները հատուկ մարդիկ էին նշանակում վանքերում, հանձնարարելով հաշվել այդ գումարները, որ

---

7 Նույն տեղում, էջ 157:

* Քանի որ հոդվածում օգտագործվում են չափերի ու կշիռների միավորներ, ապա ներկայացնում ենք դրանց համարժեքները.

– 1 չափը=45-50 օկկայի, իսկ 1 օկկան կամ հոխան՝ 400 գրամի կամ 3 ֆունտի:
– 1 բաթմանը=6 օկկայի (վանի վիլ.)
– 1 գրիվ ցորենը=1 քիլեի, իսկ 1 քիլեն–56 օկկայի
– խաֆիր՝ արաբերեն պահապան
– 1 քիլեն–180 օկկայի կամ 14 փրի և 2,5 ֆունտի (Դիարբեքիրի վիլ.)
– 1 սոմարը–է 16 փթի (Կարնո վիլ.)
– հոխա=օկկայի կամ 400 գրամի
– քոռ-արմտիքների չափը=է 293 կգ 760 գրամի, տարողությունը 326,4-367,2 լիտր:

8 Նույն տեղում, էջ 170:

9 Նույն տեղում, էջ 174:

10 Նույն տեղում, էջ 175:

11 Տե՛ս Գ. Սրվանձտյանց. Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ. հ. 2, Կ. Պոլիս, 1879, էջ 242:

12 Ատենագրություն Ազգային ժողովո. Կ. Պոլիս, 1876, էջ 218–219:

13 Տե՛ս Դիվան հայոց պատմության. հ. 13, Թիֆլիս, 1915, էջ 62:

վանահայրերը լրիվ վճարեին իրենց բաժինը: Այդ իրողությունն իր արտացոլումն է գտել Ռաֆֆու «Կայծերում»[14]: Քրդերը հայոց վանքերը հարստահարում էին նաև վաշխառության միջոցով: Նրանք պարտք էին տալիս վանքերին տոկոսներով և գումարը ժամանակին չստանալու դեպքում կամ խեղդում էին նրանց պարտքերի մեջ և վերջին հաշվով ստրկացնում կամ խլում հողերի մի մասը, գուցե և բոլորը: Մշո Ս. Կարապետ վանքի միաբանությունը, օրինակ, 1866 թ. Խուրշուդ բեյից 15 հազար ղուրուշի ցորեն էր վերցրել 3 ամսով տոկոսով: Պարտատերը, դրում էր ժամանակակիցը, պահանջում է ցորենը, բայց վանքը չուներ այն: Այժմ «վանքին ընդհանուր պարտքը տոխսան հազարի հասած է և ... մինչև նոր ցորյանը ելլա հարյուր հազարի կհասնի»[15]:

Հայոց վանքերի հողերը զավթում էին նաև թուրքերը: Ե. Տևկանցի վկայությամբ, նրանք, օրինակ, յուրացրել էին Բզնունյաց գավառի վանքապատկան տարածությունները: Ժողովուրդը քանիցս բողոքել է դրա դեմ, սակայն տեղական իշխանությունները անուշադրության են մատնել բողոքները[16]: Նույն բանն էր հաստատում նաև Գ. Սրվանձտյանցը, դրելով, որ թուրքերը գրավել են Մալաթիայի «Անծանոթ բժիշկ» մատուռի և Ս. Փրկիչ վանքի հողերը[17]:

Հայոց վանական հողերը բռնագրավում էին նաև չերքեզները[18]: Ե. Տևկանցը հիշատակում էր, որ Բասենի Գ. Կափի վանքում, որը թուրքերը կոչում են Քարու Քիլիսե, չերքեզներ են բնակվում: Նրանք հաստատվել էին նաև Աղջուր, Եղնացի և այլ վանքերում[19]:

Հայոց վանքապատկան-եկեղեցապատկան հողերը զավթում էին նաև հայերը: Մ. Միրախորյանը հաղորդում էր, որ Աղբակում կար Էջմիածին անունով մի վանք, որը երբեմն ուներ ընդարձակ հողեր: Սակայն հայ գյուղացիները ժամանակ առ ժամանակ յուրացրել են դրանք[20]: Ե. Տևկանցը նշում էր, որ Հայոց Ձորում Ս. Աստվածածին վանքի վանահայր Մովսեսի եղբայրները «իրարմե բաժանվելով վանքի հողեր իբրև յուրյանց հայրենի կալված բաժներ են մեջներնին, ըստ որում յուրյանց հավ և հայր նույն վանից մեջ նստեր են...»[21]: Նույն հեղինակի վկայությամբ, համարյա այդ կերպ են սեփականացվել հայերի կողմից նաև Ռշտունյաց գավառի Ս. Հովհաննու վանքի հողերը: Նրանք, կազմելով 7 տուն, վանքի հողերը բաժանել են իրար միջև, իսկ այժմ ձգտում են ձևակերպել իրենց հափշտակությունները թափուով: Աղթամարա տեղապահը աչք էր փակել այդ իրողության վրա, իսկ բողոքները չլսելու համար «ականջները խցեր է»[22]: Ամփո-

---

14 Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1963, էջ 441:

15 Տե՛ս Դիվան հայոց պատմության. հ. 13, էջ 65:

16 Ե ր ե մ ի ա Տ և կ ա ն ց. նշվ. աշխ., էջ 157:

17 Գ. Ս ր վ ա ն ձ ա յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 314–315:

18 Արևմտյան Հայաստանում չերքեզներ էին կոչվում Ղրիմի պատերազմից հետո Հյուսիսային Կովկասից Թուրքիա ու Արևմտյան Հայաստան գաղթած բոլոր մահմեդականները:

19 Ե ր ե մ ի ա Տ և կ ա ն ց. նշվ. աշխ., էջ 119:

20 Մ. Մ ի ր ա խ ո ր յ ա ն. Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի. մ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 57:

21 Ե ր ե մ ի ա Տ և կ ա ն ց. նշվ. աշխ., էջ 171:

22 Նույն տեղում, էջ 169:

փելով՝ իր դիտումները, Ե. Տեկանցը գրում էր. «... մեր շրջադացյալ դավառաց մեջ չկա վանք մի, որո հողը ամրողջ մնացեր է, ամեն մեկեն թե շատ ե. թե քիչ կրճատվեր է...»[23]:

Հայոց վանքապատկան-եկեղեցապատկան կալվածքները բռնագրավում էին գերազանցապես քրդերը՝ եթե գյուղացիները դիմադրավեին, նշում է Ե. Տեկանցը, այդ բռնագրավումները համեմատաբար քիչ կլինեին: Բայց խնդիրն էլ այն էր, որ սուլթանական կառավարությունը հովանավորում էր զավթիչներին և պատժում դիմադրող հայերին:

Արեմտահայ վանքերի ու եկեղեցիների հողերի հափշտակումները մեծ չափերի հասան 1890-ական թվականների հայկական ջարդերի ժամանակ: Ըստ Հ. Առաքելյանի բերած տվյալների, որոնք նա քաղել է 1912 թ. կաթողիկոս Իզմիրլյանի արխիվից և հրատարակել «Արոր» ամսագրում, այդ տարիներին քրիստոնեական-լուսավորչական հուշարձաններից կողոպտվել են 791 եկեղեցի, 85 վանք, քանդվել են 157 եկեղեցի, 26 վանք, հրկիզվել են 50 եկեղեցի, 9 վանք, մզկիթի են վերածվել 48 եկեղեցի, 10 վանք: Հայ կաթոլիկ հուշարձաններից կողոպտվել են 4 եկեղեցի, քանդվել են 2 եկեղեցի, մզկիթի է վերածվել 1 եկեղեցի: Հայ բողոքական սրբատեղերից քանդվել է 11 ժողովատեղի, 8 վարժարան, հրկիզվել է 19 ժողովատեղի, 1 վարժարան, մզկիթի է վերածվել 1 ժողովատեղի, զորանոց են դարձվել 1 ժողովատեղի և 1 վարժարան[24]:

Չնայած այդ ամենին XIX դ. վերջին ու XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում այնուամենայնիվ դեռ պահպանվում էին բազմաթիվ հայկական վանքեր ու եկեղեցիներ: Այսպես, 1903 թ. Կարնո վիլայեթում հաշվվում էր 29 վանք, 276 եկեղեցի, Բաղեշի վիլայեթում՝ 20 վանք, 234 եկեղեցի, Վանի վիլայեթում՝ 33 վանք, 138 եկեղեցի, Խարբերդի վիլայեթում՝ 15 վանք, 190 եկեղեցի, Տիգրանակերտի վիլայեթում՝ 10 վանք, 79 եկեղեցի և, վերջապես, Սեբաստիայի վիլայեթում՝ 12 վանք, 120 եկեղեցի, կամ Արեմտյան Հայաստանի վեց վիլայեթներում կային 119 վանք, 1037 եկեղեցի[25]: Գրականության մեջ հիշատակվում է նաև, որ ամրողջ Թուրքիայում XX դ. սկզբին կար հայկական 134 վանք և 1388 եկեղեցի[26]:

Այդ վանքերից շատերը դեռ ունեին անշարժ ու շարժական գույք, վարում էին իրենց տնտեսությունները: Էրզրումի վիլայեթի Ա. Լուսավորչի վանքը, օրինակ, 1898 թ. ուներ 40 արտ, մի քանի տասնյակ ոչխարներ, 2 զույգ եզ, մուտքն էր 100–150 ոսկի, ելքը՝ 60–65 ոսկի[27]: Այդ նահանգի Ս. Կարմիր վանքն ուներ «բավարար չափով լծկան անասուններ և հարյուրակ մը կովեր, որոնք վանքի համար կապահովեին նյութական կարևոր հասույթ մը»[28]: Բիթլիսի վիլայեթի Ս. Աստվածածին վանքը տիրում էր 40 արտերի, որոնցից տարեկան ստանում էր 1000 կոտ ցորեն: Այն ուներ նաև խոշոր ու մանր եղջերավոր անասուններ: Վանքի տարեկան եկամուտը

23 Նույն տեղում:

24 Տե՛ս «Արոր», 1913, դեկտեմբեր, էջ 78:

25 Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց. Կ. Պոլիս, 1903, էջ 320-346 (հաշվումները կատարված են մեր կողմից):

26 Ջ ի թ ո ւ ն ի. Հուշիկք Հայաստանի. Կ. Պոլիս, 1919, էջ 65-66:

27 «Բյուզանդիոն», 1898, հունիսի 26:

28 Ղ ա զ ա ր Ջ ա ր ը գ. Հուշամատյան Բարձր Հայքի. Պեյրութ, 1957. էջ 86:

հասնում էր շուրջ 200 ոսկու[29]: Ս. Կարապետ վանքի հարստության մասին հիշատակում են եվրոպացի հեղինակները: Ֆրանսիացի գիտնականներ Ժորժ Պիսոն և Ալբեռ Դրվըլիեն 1890 թ. ճանապարհորդելով դեպի Պարսկաստան, գրում էին, որ Ս. Կարապետ վանքի կալվածքները «բավական ընդարձակ են (ձիով ծայրե ի ծայր գնալու համար մի քանի ժամ է հարկավոր) և բաղկացած են հատանելի անտառներից, հերկելի դաշտերից և խոտավետ լայն սարահարթերից...: Այժմ վանքն ունի երեք ագարակ, ուր պահում են 1000 գլուխ այծ ու ոչխար, 100 եզ ու կով, 60 ձի, 20 էշ, 4 ջորի և 156 ծառա»[30]: Խարբերդի վիլայեթում իր հարստությամբ հայտնի էր Ս Հովհան վանքը, որը ցանում է 60 քոռ սերմ (1 քոռ=60–62 օխայի) և ստանում է տարեկան 80 օսմանյան ոսկու եկամուտ: Եթե իր հողերը լավ մշակի, կարող է ստանալ մինչև 150 ոսկու հասույթ[31], բայց այդ կուսակալությունում իր ունեցվածքով ավելի նշանավոր էր Ս. Գևորգ վանքը: Այն ուներ 480 քոռ արտ, 265 քոռ անմշակ հող, 10 արտավար այգի, 11 արտավար արոտ և 94 արտավար պարտեզ: Ականատեսը գրում էր, որ այս վանքի «հողերն այնքան արգասավոր են, որ գավառիս ամեն տեսակ բերքեր ամենաազնիվը կարտադրե, մանավանդ ցորյանն ու լուբիան...»[32]: Ապա շարունակում էր, որ այդ վանքի հողերի 2/3-ը ջրարբի է: Եթե ցանկություն լինի, մյուս մասերն էլ կարելի է դարձնել ջրարբի: Ս. Գևորգ վանքը տարեկան ստանում է 80–90 օսմանյան ոսկու եկամուտ: Լավ մշակելու դեպքում այդ թիվը կարող է հասցնել 150–160 ոսկու[33]:

Ամենահարուստը, սակայն, Աղթամարի վանքերն էին, որոնք ունեին ընդարձակ վարելահողեր «կես ջրարբի և կես անջրդի», արոտավայրեր «ոչխարաց ու խաշանց համար», այգիներ ու բանջարանոցներ: Վանքերի տնտեսությունն իր ձեռքը վերցրած Մ. Խրիմյանը կառավարությունից գնեց Վերին Խոշապ գյուղում գտնվող «Սալախանե» ամայի կալվածքը, բնակեցրեց այն տարբեր տեղերից բերված 30–40 հայ ընտանիքներով, հատկացրեց յուրաքանչյուրին նրանց անդամների թվին համեմատ հողաբաժին պարտավորեցնելով տալ «զկայսերն կայսեր, և զԱստուծոյն Աստուծոյ»:[34] Մ. Խրիմյանի առաջարկությամբ մեծացվեց «Սալախանեի» մոտերքում ընկած լճակը նոր տարածքներ յուրացնելու և գյուղացիների հոզերը ոռոգելու համար: Այնուհետև, նրա ջանքերով Եվրոպայից բերվեցին երկրագործական կատարելագործված գործիքներ և հատկացվեցին Ս. Վարդա վանքին[35]:

Ի՞նչ աշխատանք էր կիրառվում վանքերում: Այդ հարցը լուսաբանելու համար վիճակագրական տվյալներ չունենք: Կան միայն ժամանակի հեղինակների վկայությունները, որոնց հիման վրա կարելի է հանգել որոշակի եզրակացության: Բերենք այդ վկայությունների մի մասը:

---

29 «Բյուզանդիոն», 1897, նոյեմբերի 24:

30 «Արձագանք», 1892, հունվարի 19, № 8:

31 «Արաքս», 1888, գիրք Բ, էջ 35-36:

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում:

34 Մ. Մ ի ր ա խ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 45:

35 Տե՛ս Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, նշանավոր վանքեր. Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 59:

1859 թ. «Արծիվ Վասպուրականին» գրում էր, որ Վանի վիլայեթի Ս. Խաչ վանքի հողերը մշակում է մի վարդապետ «քանի մը մշակներով»[36]: Գեներալ-մայոր Մ. Լիխուտինը նշում էր, որ Բայազետի սանջակի Ս. Հովհաննես վանքի գյուղերում հաստատված բնակիչները իրենց ստացած հողերի գիմաց վանքին վճարում են հավաքած բերքով և նրա օգտին կատարում են ծառայություններ[37]: Մալաթիայում Ս. Լուսավորիչ վանքը իր արտերը հնձել էր տալիս քրդերին[38]: Խարբերդի գավառի Ս. Սորսրու վանքը ուներ 10 տուն գյուղացի, որոնք վանքի մարարաներն էին (այսինքն՝ ֆեոդալական կախյալ գյուղացիներ) «իրենց ընտանեոք և անասունովք»: Նրանք մշակում էին «վանքի 81 ընտիր արտերը»[39]: Նույն գավառի Դատեմ գյուղի վանքն իր արտերը տալիս է մշակելու մարաբաներին, որոնցից ստանում է տարեկան 100 քիլե ցորեն, 50 քիլե դաբի, 100 հոխա բամբակ և այլն[40]: Բալուի գավառի Հավավու, Պաղին և Ս. Աստվածածին վանքերն իրենց արտերը մշակում էին մարարաների[41], իսկ Ս. Խաչ վանքը՝ մշակների ուժերով[42]: Վանի վիլայեթի Աղբակ գավառում գտնվող Ս. Բարղուղիմեոս վանքի հողերը մշակում էին 20 տուն հայ և 20 տուն քուրդ գյուղացիներ[43]: Ցավոք, Մ. Միրախորյանը չի նշում դրանք կիսարաներ էին, թե վարձու աշխատողներ: Ե. Տևկանցը գրում էր, որ Կարնո վիլայեթի Ս. Լուսավորչաց վանքն ունի 30 սոմար արգավանդ հող, որը տրվում է վարձով[44]: Ապա ավելացնում էր, որ այդ վանքը տարին 3000 ղուրուշ է ծախսում մշակների ու հովիվների վրա[45]: Նույն հեղինակի վկայությամբ, Բասենի Մագիստրոս վանքը վարձում էր 4 մշակ, որոնց տալիս էր 2000 ղուրուշ և հովիվներ ու ծառայողներ (թվաքանակը չի նշում)՝ վճարելով նրանց 1700 ղուրուշ[46]: Ս. Հովհաննես վանքը վարձում էր 53 հոգի, որից 23-ը զանազան գործավորներ, 6-ը հացթուխ, կովկիթ և այլ կանայք, մնացածը նախրապաններ, հորթարածներ, հովիվներ և այլն[47]: Վանի վիլայեթի Ս. Գրիգորի վանքը ուներ 11 թեմական գյուղ, որի արոր ու գութան ունեցող ամեն մի տուն տարին 1 օր ձրի բանում էր վանքի համար[48]: Նույն վիլայեթի Կարմրորու Աստվածածնի վանքը ուներ 2 մշակ, 5 հոտաղ, 2 տնտես: Ուներ նաև 2 թեմական գյուղ, որոնց ամեն մի տուն տալիս էր վանքի տնտեսության մեջ աշխատելու համար 1 սարակ[49]: Վիլայեթի Կտուց Ս. Անապատի վանքն ուներ 20 մշակ ու 2 թեմական գյուղ: Գյուղե-

36 «Արծիվ Վասպուրականի», 1859, էջ 87:

37 М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854-1855 годах. СПб., 1863, с. 165.

38 Տե՛ս Գ. Սրվանձտյան ց. նշվ. աշխ., էջ 313:

39 Նույն տեղում, էջ 88:

40 Նույն տեղում, էջ 89, տե՛ս նաև «Արևելյան մամուլ», 1884, էջ 115:

41 Գ. Սրվանձտյան ց. նշվ. աշխ., էջ 168:

42 Նույն տեղում, էջ 179:

43 Մ. Միրախորյան. նշվ. աշխ., էջ 80, 84:

44 Երեմիա Տևկանց. նշվ. աշխ., էջ 44:

45 Նույն տեղում, էջ 57:

46 Նույն տեղում:

47 Նույն տեղում, էջ 145:

48 Նույն տեղում, էջ 244:

49 Նույն տեղում, էջ 246:

ըից յուրաքանչյուր տուն վանքին տարեկան տրամադրում էր 1 աշխատող՝ արտերը հնձելու համար[50]: Վանի վիլայեթի Լիմ Ս. Անապատի վանքն ուներ 18 մշակ, 3 պառավ կին և մարաբաներ (թիվը չի հիշատակվում): Վանքն իր տնտեսությունը վարում էր դրանց միջոցով[51]:

Վարագա Ս. Նշան վանքը պահում էր 34, Ս. Աստվածածինը՝ 8, Աղթամարի Ս. Խաչը՝ 15 մշակ, իսկ Բերգաձորի Ս. Աստվածածինն ուներ 12 տուն գյուղացիներ, որոնք մշակում էին վանքի հողերը, բերքի 5 բաժինց մեկը տալով վանքին[52]:

Բերված փաստերը ցույց են տալիս, որ արևմտահայ վանական տնտեսության մեջ գերիշխում էին շահագործման ֆեոդալական ձևերը՝ կիսարարությունը, մարաբայությունը, սարակությունը, իսկ կապիտալիստական եղանակները՝ մշակությունը կամ ազատավարձու աշխատանքը անհամեմատ քիչ էին օգտագործվում: Սակայն պիտի նկատի ունենալ, որ մարաբաների մի զգալի մասը գյուղատնտեսական բանվորներ կամ բատրակներ էին: Հանրահայտ է, որ կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ ոչ միշտ է անջատում կամ բաժանում անմիջական արտադրողին հողից, բազմաթիվ դեպքերում այն, ընդհակառակը, նրան ամրակցում է հողին, տալով նաև արտադրական միջոցներ:

Հայոց վանքերն ու եկեղեցիները թույլ էին ընդգրկված, իսկ մի մասը բոլորովին ընդգրկված չէր շուկայական հարաբերությունների մեջ: Բացառություն էր կազմում Վարագա վանքը, որի տնտեսական գործունեությունն ուներ գերազանցապես ապրանքակապիտալիստական բնույթ: Ե. Տևկանցը նշում էր, որ 1873 թ. մայիսին նրա եկամուտները կազմում էին 30200 ղուրուշ, որի մեծ մասը ստացել էր ցորենի, ոչխարների ու դառների, պանրի, յուղի, խոտի, բրդի վաճառքից, իսկ ծախսերը՝ 20765 ղուրուշ[53]:

Վարագա վանքի աննախադեպ զարդացումը պայմանավորված էր Խրիմյան Հայրիկի եռանդուն գործունեությամբ: Ե. Տևկանցը 1873 թ. գրում էր, որ 17 տարի առաջ նա հատուկ կոնդակով վանահայրությունն անջատեց առաջնորդարանից և վերցրեց իր ձեռքը: Դրանով Խրիմյանն ազատ գործունեության հնարավորություն ստացավ: Այդ պատճառով թուրք իշխանավորները և թուրքամետ հայ գործիչները «սկսան թշնամությամբ վարվել վանահոր դեմ, զանազան տեսակ արգելքներ հարուցին Խրիմյանի դեմ, տպարան դոցեցին, դպրոցին հակառակեցան, որպեսզի վանահայր արտաքս վարելով կրկին առաջին դրության բերեին, սակայն յուրյանց թե՛ հայտնի և թե՛ գաղտնի մեքենայությունք խորտակեցան Խրիմյանի խորախորհուրդ հեռատեսության և գործունեության առաջ: Դեռ մինչև ցայսօր կան իշխանաց մեջ, որ եթե պատեհ առիթ ունենան, վանքն առաջնորդության հետ միացնելով վանքի վրա ազդեցություն բանեցնել, բայց հույժ տկարացած են»[54]:

50 Նույն տեղում, էջ 247:
51 Նույն տեղում, էջ 255:
52 Նույն տեղում, էջ 287-288:
53 Նույն տեղում, էջ 273-274:
54 Նույն տեղում, էջ 271:

*1890-ական թվականների հայկական կոտորածների տարիներին Վարագա վանքը համարյա ամբողջովին ավերվեց: Թուրք ու քուրդ բարբարոսները թալանեցին նրա շարժական դույքը, ղավթեցին հողերը, ջարդեցին ու ոչնչացրին մեքենաները: Սակայն հետագայում, հատկապես 1908 թ. հեղաշրջումից հետո Վանի վանքերը կրկին ոտքի կանգնեցին ու առաջադիմեցին: Այսպես, 1903 թ. նրանց եկամուտները կազմում էին 12544, իսկ 1908 թ՝ 104962 ղուրուշ[55]: Հովսեփ Խլղաթյանը նշում էր, որ Վանի վանքերը մեծ եկամուտներ էին ստանում ինչպես անասունների, այնպես էլ հացահատիկի վաճառքից[56]: Մի շարք տեղերում աճում է վանքերի հին կուլտուրաների արտադրությունը և արմատավորվում են նոր տեսակներ:*

*Այդպիսով XIX դ. վերջին ու XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանում վանական տնտեսությունը, թեև մասնակիորեն բարելավվում էր, ներքաշվում ապրանքակապիտալիստական հարաբերությունների մեջ, բայց ընդհանուր առմամբ սուլթանական կառավարության վարած հակահայկական քաղաքականության հետևանքով շարունակում էր քայքայվել: Մեծ եղեռնի օրերին երիտթուրքական ոճրագործները հայ ժողովրդի բնաջնջման ու արտաքսման հետ միասին ոչնչացրին նաև նրա վանական հողատիրությունն ու վանքերի և եկեղեցիների մեծ մասը: Այժմ Թուրքիայի նախկին հայաբնակ վայրերում կանգնած են հայկական սոսկ առանձին վանքեր՝ որպես հայոց երբևէ դոյության ու արարման լուռ վկաներ:*

## МОНАСТЫРСКОЕ ХОЗЯЙСТВО В ЗАПАДНОЙ АРМЕНИИ
(вторая половина XIX в. — начало XX в.)

*ԱԶԱՏ ԱՄԲԱՐՅԱՆ*

### Резюме

Монастырское хозяйство в Западной Армении во второй половине XIX — начале XX в. в результате шовинистической и антиармянской политики турецкого правительства переживало упадок. Монастыри и монастырские земли становились объектом постоянного грабежа и захвата со стороны турецких и курдских феодалов, а также частных лиц. Несмотря на это в ряде мест благодаря заботе и предприимчивости армянского духовенства монастырское хозяйство все-таки развивалось. В отдельных местах расширялись земли, улучшались орудия труда, увеличилась доля наемного труда. Но в период геноцида армян их монастырское хозяйство было окончательно уничтожено младотурецкими и курдскими разбойничьими шайками.

55 *Տե՛ս «Ազատամարտ», 1909, հոկտեմբերի 17:*
56 *Նույն տեղում:*

## MONASTERIAL ECONOMY IN WESTERN ARMENIA
(second half of XIX century – beginning of XX century)

*AZAT HAMBARYAN*

S u m m a r y

In the second half of the XIX century and at the beginning of the XX century the monasterial economy of Western Armenia was declining as a result of chauvinistic and antiarmenian policy of the Turkish government. The monasteries and monasterial lands became the object of constant capture and robbery by Turkish and Kurdish feudals, as well as private persons. Howerver, despite it, in a number of places monasterial economy was developing owing to the concern and enterprise of Armenian clergy. Lands were expanding, labour implements were improving, hired labour share was increasing. But in the period of Armenian genocide monasterial economy was eventually destroyed by Young Turkish and Kurdish robbery gangs.